Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանին

Հարգելի պարոն Ջհանգիրյան,

«Իրավաբանների հակակական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ԻՀԱ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) և դրանից բխող գործողությունների ծրագրերի 2019-2021 թվականների կատարման այլընտրանքային հասարակական մշտադիտարկում:

Սույնով տեղեկացնում ենք, որ ԻՀԱ-ի թիմը սկսել է մշտադիտարկման աշխատանքները, որը ենթադրում է որակական և քանակական մեթոդների կիրառությամբ Ռազմավարության գործողությունների ծրագրերի իրականացման առաջընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում: Մշտադիտարկման իրականացման հետ կապված ԻՀԱ-ն ակնկալում է Բարձրագույն դատական խորհրդի աջակցությունը:

Ռազմավարությունից բխող էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագրով (N 4 հավելված) Բարձրագույն դատական խորհուրդը հանդիսանում է մշտադիտարկման ժամանկահատվում իրականացվելիք մի շարք գործողությունների (Նպատակ 1՝ գործողություններ 3,5,6,7,10, Նպատակ 2՝ գործողություն 7) պատասխանատու (համակատարող) մարմին:

ա) Նպատակ 1.

1. Գործողություն 3-ի արդյունքով նախատեսվում է, որ 2020 թվականին «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: Գործողության 3-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքին նախագծերը հավանության են արժանացել ՀՀ կառավարության կողմից: Գործողություն 3-ի իրականացման համար նշվել է, որ ֆինանսավորում չի պահանջվում:
2. Գործողության 5-ով 2021 թվականին նախատեսվում է, որ դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման կարգի կատարելագործմանն ուղղված ծրագիրը մշակվել է՝ շահագրգիռ մարմինների և համապատասխան ծրագրային ապահովումն իրականացնող կազմակերպության հետ քննարկումների հիման վրա, իսկ Գործողություն 5-ի արդյունքով նախատեսվում է, որ 2021 և 2022 թվականներին դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման կարգը

կատարելագործված է և հաշվի է առնում դատավորի ծանրաբեռնվածությունը և գործի բարդությունը, ինչպես նաև չկան դատավորներ, որոնք բացառիկ լիազորություն ունեն քննելու կոնկրետ կատեգորիայի գործեր: Գործողության 5-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. դատական գործերի էլեկտրոնային մակագրության և բաշխման կարգը կատարելագործելուն ուղղված փոփոխությունների նախագիծը և գործնական կառուցակարգերը մշակվել են, քննարկվել են շահագրգիռ մարմինների հետ, հաստատվել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել ԱԺ: Գործողություն 5-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել օրենքով չարգելված այլ աղբյուրները:

3. Գործողության 6-ով 2021 թվականի 1-ին կիսամյակում նախատեսվում է, որ մշակվել է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը, նախագծերը սահմանված կարգով շրջանառվել են և ուղարկվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: Գործողություն 6-ի արդյունքով նախատեսվում է, որ 2021 թվականի 1-ին և 2022 թվականի 2-րդ կիսամյակներում «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը ներկայացվել են ՀՀ ԱԺ և դրանով սահմանվել են էլեկտրոնային եղանակով փաստաթղթերի ներկայացման ընթացակարգեր, իսկ Գործողության 6-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: Գործողություն 6-ի իրականացման համար նշվել է, որ ֆինանսավորում չի պահանջվում:
4. Գործողություն 7-ի արդյունքով նախատեսվում է, որ 2021 թվականին Դատարաններում ներդրվել էլ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը: Գործողության 7-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. համակարգը ներդրվել է և շահագործվել է: Վերապատրաստվել են դատական համակարգի աշխատակիցները, դատավորները, իրականացվել են հանրային իրազեկվածության բարձրացմաննուղղված աշխատանքներ: Գործողություն 7-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել պետական բյուջեն և օրենքով չարգելված այլ աղբյուրները:
5. Գործողության 10-ով 2021 թվականի 2-րդ կիսամյակում նախատեսվում է, որ իրականցվել է առցանց եղանակով գործի նյութերին ծանոթանալը, պատճեններ ստանալը, ապացույցներ ներկայացնելը, միջնորդություններ և դատավարական այլ գործողություն-ներ կատարելը: Գործողություն 10-ի արդյունքով նախատեսվում է, որ 2021 թվականի 2-րդ և 2022 թվականի 2-րդ կիսամյակներում ներդրվել է էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի քրեական գործերով էլեկտրոնային ենթահամակարգը, ապահովվել է իրավապահ, դատական և իրավակիրառ մարմինների միջև փաստաթղթաշրջանառությունը և փոխգործելիությունը: Գործողության 10-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. Էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի քաղաքացիական և վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը ներդրվել է: Վերապատրաստվել են դատական համակարգի աշխատակիցները, դատավորները, իրականացվել են հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներ: Գործողություն 10-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել պետական բյուջեն և օրենքով չարգելված այլ աղբյուրները:

բ) Նպատակ 2.

1. Գործողություն 7-ի արդյունքով նախատեսվում է, որ 2020 և 2021 թվականների ներդնել այլընտրանքային վեճերի լուծման էլեկտրոնային համակարգը: Գործողության 7-ի արդյունքի համար ստուգման միջոց է նախատեսվել հետևյալը. ապահովվել է էլեկտրոնային եղանակով այլընտրանքային վեճերի լուծման հնարավորությունը: Գործողություն 7-ի իրականացման համար ֆինանսական միջոցների աղբյուր է նշվել պետական բյուջեն և օրենքով չարգելված այլ աղբյուրները:

Ուստի հաշվի առնելով վերոնշյալը, խնդրում ենք, մինչև 2022 թվականի հունվարի 19-ը ներառյալ, ուղարկել սույն գրությանը կից ներկայացված Հավելված 1-ում նշված հարցաշարի պատասխանը՝ դրանում ձեզ, որպես պատասխանատու (համակատարող) մարմնին վերաբերելի գործողությունների շրջանակներում, ինչպես նաև 2019, 2020, 2021 թվականների իրականացված ժամանակահատվածների և առանձին գործողությունների, տրամադրել Ռազմավարությունից բխող էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագրի (N 4 հավելված) Նպատակ 1-ով նախատեսված 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ գործողությունների և Նպատակ 2-ով նախատեսված 7-րդ գործողության արդյունքների և ստուգման միջոցների իրականացումը վկայող տեղեկատվություն, իսկ այն գործողությունների դեպքում, որոնց կատարման արդյունքները և ստուգման միջոցները նախատեսված են եղել իրավական ակտերի նախագծերի մշակում, կառուցակարգերի, այդ թվում էլեկտրոնային համակարգերի ներդնում, ուսումնասիրությունների, տեխնիկական նկարագրերի, վերապատրաստումների, հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքների կամ այլ միջոցառումների իրականացում և դրանք որևէ եղանակով ամփոփված են կամ դրանց իրականացման մասին հասանելի աղբյուրներում առկա է համապատասխան տեղեկատվություն, ապա մշտադիտարկման ընթացքում դրանց որակական գնահատման նպատակով խնդրում ենք տրամադրել դրանց ամփոփումները (օրինակ՝ միջոցառումների (դասընթացների) մասնակիցների քանակը՝ ըստ պատկան մարմինների, պատկան մարմիններից ստացված կարծիքների ամփոփումը և այլն), ինչպես նաև դրանց էլեկտրոնային հղումները կամ կցել վկայող համապատասխան փաստաթղթերը, որոնք նշված չեն սույն գրությանը կից ներկայացված Հավելված 1-ում նշված հարցաշարի հարցերում:

Խնդրում ենք նաև, այն գործողությունների համար, որոնց համար ֆինանսական աղբյուր է նախատեսված պետական պետական բյուջեն և օրենքով չարգելված այլ աղբյուրները, տրամադրել այդ գործողությունների ֆինանսավորման գումարի չափի և ֆինանսավորման աղբյուրների մասին համապարփակ տեղեկատվություն:

Նաև տեղեկացնում ենք, որ Ռազմավարությունից բխող էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագրի (N 4 հավելված) մշտադիտարկման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է առցանց ֆոկուս խմբային քննարկումների իրականացում հիմնական շահագրգիռ կողմերի և Գործողությունների ծրագիրն իրականացնողների (կատարողների, համակատարողների) հետ: Հաշվի առնելով վերոգրյալը, 2022 թվականի հունվարի 24-ին, ժամը 11:00-ին **ՀՀ վարչապետի աշխատակազմի, ՀՀ արդարադատության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների, ՀՀ բարձրագույն դատական խորհրդի, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ նոտարական պալատի և «Էկենգ» ՓԲԸ-ի** մասնագետների մասնակցությամբ իրականացնում ենք առցանց ֆոկուս խմբային քննարկում, որի ընթացքում օգտագործվելու են նաև սույն գրությամբ հարցվող տեղեկությունները:

Առցանց ֆոկուս խմբային քննարկման ընթացքում նախատեսված է օգտագործել սույն գրությանը կից ներկայացված Հավելված 1-ում նշված հարցաշարը՝ դրանում նշված

յուրաքանչյուր պատասխանատու (համակատարող) մարմնին վերաբերելի գործողությունների շրջանակներում:

Խնդրում ենք ֆոկուս խմբային քննարկմանը ապահովել Բարձրագույն դատական խորհրդի 1-ից մինչև 3 անդամների և/կամ մասնագետների մասնակցությունը, որոնք տիրապետում են Ռազմավարությունից բխող էլեկտրոնային արդարադատության միասնական համակարգի ստեղծման և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովման և արդիականացման գործողությունների ծրագրի (N 4 հավելված) առանձին գործողությունների (Նպատակ 1՝ գործողություններ 3,5,6,7,10, Նպատակ 2՝ գործողություն 7) ընթացքին, որոնցով Բարձրագույն դատական խորհուրդը հանդիսանում է պատասխանատու (համակատարող) մարմին, տրամադրելով մասնագետների անուն ազգանունը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն:

Քննարկումը կանցկացվի առցանց, հետևյալ հղմամբ. https://zoom.us/j/91557335421?pwd=Sk5JVTIzZWNMRWZoTlFJbkxQYVJGdz09,

Հանդիպման կոդը՝ 915 5733 5421, գաղտնաբառը՝ 087077:

Խնդրում ենք սույն գրության պատասխանը և հարցվող տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով ուղարկել ԻՀԱ-ի info@armla.am պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

Հարգանքով՝

Կարեն Զադոյան

Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ

Կատարող՝

Սյուզաննա Սողոմոնյան

Դատաիրավական և հակակոռուպցիոն հարցերով փորձագետ